

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Ս. Գրիգոր Լուսավորչի մասին տեղեկությունները վիպական պատումի տեսքով մեզ են հասել Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոց» աշխատությունից և հունարեն, արաբերեն և վրացերեն լեզուներով մեզ հասած Վարքերով, որոնց աղբյուրը եղել է հայերեն Վարքը: Այդ Վարքի բնագիրը մեզ չի հասել[1]: Այս տեղեկությունները հիմնականում հիշողություններ ու կրոյցներ են՝ հրաշապատում տարրերով: Թեև Ագաթանգեղոսի Պատմության մեջ և մյուս Վարքերում պահպանված ավանդությունները շատ բաներով ճոխացված են, այնուամենայնիվ որոշ փաստեր պատմական են:

Ըստ Ագաթանգեղոսի և մյուս Վարքերի, Սասանյան հեղաշրջումից հետո Սասանյան Արտաշիրի դեմ պատերազմ է մղում հայոց Խոսրով արքան: Երկարատև պատերազմի ընթացքում Արտաշիրը չի կարողանում ընկճել Խոսրովին և նրան միացած պարթևներին: Արտաշիրը որոշում է դավադրաբար սպանել Խոսրովին: Սպանությունը հանձն է առնում Սուրենյան Պահլավի տոհմից Անակ Պարթևը: Անակը իր եղբոր հետ ընտանիքով գալիս է Հայաստան՝ իբր թե փախչելով Արտաշիրից: Խոսրովն ընդունում է նրան, մեծամեծ պարգևներ տալիս: Երկու տարի չանցած՝ Անակը որսի ժամանակ սպանում է Խոսրովին, որը իր վերջին ջնջում հրամայում է բնաջինջ անել Անակի տոհմը: Փրկվում են միայն երկու մանուկներ, որոնցից մեկը Գրիգորն էր, որին դայակը՝ Սոփիան, փախցնում է Կեսարիա, որտեղ և Գրիգորը մկրտվում է քրիստոնյա և դաստիարակվում քրիստոնեական ոգով: Կեսարիայում Գրիգորը ամուսնանում է մի բարեպաշտ մարդու Դավթի դստեր հետ, ունենում երկու արու զավակ: Շատ չանցած՝ Գրիգորի կինը, իր հետ վերցնելով կրտսեր որդուն՝ Արիստակեսին, մտնում է վանք, իսկ Գրիգորը Տրդատի գահակալությունից հետո վերադառնում է Հայաստան՝ քավելու հոր գործած մեղքը: Այստեղ նա ծառայում է Տրդատին որպես արքունի սպասավոր: Մի միջադեպ, այն է՝ Անահիտ դիցուհուն զոհեր մատուցելը, պատճառ է դառնում, որ Տրդատը իմանա Գրիգորի քրիստոնյա լինելը և նրան ենթարկի սարսափելի տանջանքների, որոնք մեկ առ մեկ նկարագրված են Ագաթանգեղոսի Պատմության մեջ: Վերջապես չկարողանալով ընկճել Գրիգորին և իմանալով, որ նա արքայասպան Անակի որդին է, Տրդատը հրամայում է նրան նետել Արտաշատի Խորվիրապ կոչվող բանտը:

Այդ ժամանակ Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից Հայաստան են փախչում մի խումբ քրիստոնյա կույսեր՝ Գայանեի գլխավորությամբ: Նրանք հաստատվում են Վաղարշապատ մայրաքաղաքի մոտ գտնվող մի հնձանում, որը դառնում է նրանց մենաստանը: Կույսերը ապակե ուլունքներ են պատրաստում, վաճառում և այդպես հոգում իրենց ապրուստը: Նրանց մեջ էր իշխանական ընտանիքից սերած գեղանի Հռիփսիմեն, որին Տրդատ թագավորը ցանկանում է կնության առնել: Հռիփսիմեն մերժում է Տրդատի առաջարկը, սակայն թագավորը

[1] *Պ. Մուրադյան*, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Երևան, 1982, էջ 10:

նրան բռնի բերել է տալիս պալատ: Չկամենալով ենթարկվել արքայի ցանկությանը՝ Հռիփսիմե կույսը փախչում է պալատից: Հետապնդողները արքայի հրամանով նահատակում են նրան իր ընկերուհիների հետ միասին: Նահատակվում են նաև Գայանեն և մյուս կույսերը:

Կույսերի նահատակությունից հետո Տրդատը հիվանդանում է մի տարօրինակ հիվանդությամբ և դիվահար եղած ընկնում անտառներն ու եղեգնուտները: Այդ ժամանակ թագավորի քրոջը՝ Խոսրովիդուխտին, երազի միջոցով հայտնվում է, որ միայն Խորվիրապում գտնվող Գրիգորը կարող է բուժել թագավորին: Օտա Ամատունին բանտից դուրս է բերում Գրիգորին, որը կենդանի էր մնացել ջնորհիվ մի բարեպաշտ կնոջ հոգատարության: Գրիգորը կարողանում է բժշկել Տրդատին և դարձի բերել նրան: Տրդատը համոզվում է քրիստոնեական կրոնի ճշմարտությանը և Գրիգորի հետ սկսում պայքարը հեթանոսության դեմ, որն ավարտվում է նրանով, որ Հայաստանում քրիստոնեությունը հռչակվում է պետական կրոն:

Գրիգորը տեսնում է մի տեսիլք: Նրան հայտնվում է, թե Վաղարշապատում պետք է կառուցվեն եկեղեցիներ: Ըստ այդ տեսիլքի, Միածնի իջած վայրում կառուցվում է Մայր տաճարը՝ Էջմիածինը, Հռիփսիմեի նահատակված վայրում՝ Ս. Հռիփսիմեի տաճարը, Գայանեի նահատակված վայրում՝ նրա անվան տաճարը:

Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեությունը հաստատելուն զուգահեռ պայքարում է նաև հեթանոսության դեմ, քանդում հեթանոսական մեհյանները: Նախ Վաղարշապատում քանդում է Տիր աստուծո տաճարի բագինը, Արտաշատում՝ Անահտական մեհյանը: Այնուհետև անցնում է Հայաստանի արևմտյան գավառները, ուր հիմնականում կենտրոնացած էին տաճարները. Դարանաղյաց գավառի Թորդան գյուղում՝ Բարշամինա տաճարը, Անի ավանում՝ Արամազդի տաճարը, Երեզ ավանում՝ Անահտական մեհյանը, Թիլ ավանում՝ Նանեի տաճարը, և Բագայառիճում՝ Միհրի մեհյանը: Այս բոլոր տաճարները քանդելուց հետո Սուրբ Գրիգոր Լուսավորիչը տաճարների կալվածքներն ու գանձերը տրամադրում է նորակազմ Եկեղեցուն:

Այնուհետև Ս. Գրիգորը տասնվեց մեծագույն նախարարների ընկերակցությամբ հանդիսավոր կերպով մեկնում է Կեսարիա՝ ձեռնադրվելու եպիսկոպոսապետ: Նրա հետ էին Հայաստանի բդեշխները, թագադիր ասպետը, Մամիկոնյան սպարապետը, Ռշտունյաց, Մոկաց, Արծրունյաց և այլ իշխաններ: Ղևոնդիոս Հայրապետի կողմից ձեռնադրվելուց հետո, Ս. Գրիգորը վերադառնում է Հայաստան և շարունակում իր գործունեությունը: Վերադարձի ճանապարհին՝ Տարոնում, ուր կային Վահագնի, Անահիտի և Աստղիկի սրբավայրերը, նա քանդել է տալիս բագինները, բռնագրավում բոլոր մեհյանները իրենց կալվածքներով ու գանձերով: Այնուհետև սկսում է կազմակերպել Հայ Եկեղեցին՝ պատրաստելով եկեղեցականներ և հաստատելով եպիսկոպոսական վիճակներ:

Տրդատի և Կոստանդիանոս կայսեր միջև կնքվում է դաշինք: Հետո տեղի է ունենում առաջին Տիեզերական ժողովը Նիկիայում: Հայաստանից այդ ժողովին մասնակցում է Արիստակեսը, որը Ս. Գրիգորից ստացել էր կաթողիկոսական ձեռնադրություն: Ս. Գրիգոր Լուսավորիչը իր կյանքի վերջին օրերը անց է կացնում Դարանաղյաց գավառի Սեպուհ լեռան «Մանյա այրք» կոչված վայրում, որտեղ և նա կնքում է իր մահկանացուն:

Ինչպես վարքագրական այլ գործերում, այստեղ ևս մեծ տեղ է հատկացված վիպական պատմություններին: Գրիգոր Լուսավորչի վարքը մեզ է հասել տարբեր խմբագրություններով, որոնցից օգտվել են մեր պատմիչները:

Ս. Գրիգոր Լուսավորչի ծննդյան թվականը ճշտելու համար անհրաժեշտ է կանգ առնել հայոց Խոսրով Բ թագավորի սպանության հանգամանքների վրա, քանի որ և՛ Գրիգորի, և՛ Տրդատի ծննդյան պարագաները կապված են, ըստ ավանդության, այս եղերական դեպքի հետ:

Քննության առնելով վերոհիշյալ ավանդությունները՝ պատմաբանները տարբեր կարծիքներ են հայտնել թե՛ Ս. Գրիգորի ծնընդյան և թե՛ նրա ազգության վերաբերյալ:

Այսպես, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը գտնում է, որ ճիշտ է այս ավանդությունը, և Խոսրով Բ-ի սպանությունը կատարվել է 240 թվականին, ըստ այդմ Գրիգոր Լուսավորիչը պետք է ծնված լինի 239 թվականին մոտ[2]: Նույն տեսակետն են պաշտպանում Լեոն[3] և Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը[4]:

Այս տեսակետը պաշտպանողները հիմնվում են հիմնականում Մովսես Խորենացու Պատմության ժամանակագրության վրա, որը չի կարելի ապահով միջոց համարել, մա-

---

[2] *Մաղաքիա արք. Օրմանյան*, Ազգապատում, Բեյրութ, 1959, հտ. Ա, էջ 72:

[3] *Լեո*, Հայոց Պատմություն, հտ. Ա, Երևան, 1966, էջ 418—420:

[4] *Կարապետ ծ. վրդ.*, Հայոց Եկեղեցւոյ պատմություն, Վաղարշապատ, 1908, էջ 69:

նավանդ որ Խորենացու մոտ գրեթե ամբողջ Գ դարի համար ունենք երկու թագավոր:

Նորագույն պատմագրությունը, մանավանդ Մանանդյանը, Խոսրով Բ-ի սպանությունը նշում են 287 թվականին[5]: Ըստ որում, եթե ճշմարիտ համարենք պահպանված ավանդությունը, թե Խոսրով Բ-ին սպանել է Անակ Պարթևը, և Գրիգորը այդ ժամանակ հավիվ մեկ տարեկան մանուկ է եղել, ապա պետք է Գրիգորը ծնված լինի 285/6 թվականներին: Այսինքն, այս դեպքում հայոց դարձի ժամանակ նա հավիվ 15—16 տարեկան մի պատանի կլիներ, ինչ որ չի կարող հավանական համարվել:

Այն, որ Խոսրով Բ-ի սպանությունը տեղի է ունեցել 287 թվականին, հաստատվում է հայ և օտար պատմիչներից մեկ հասած տեղեկություններով[6]: Այդ ժամանակ Տրդատը հավիվ 15—16 տարեկան մի պատանի էր: Հետագայում նա ժառանգեց իր հայրական գահը (298), երբ արդեն 30 տարեկանին մոտ երիտասարդ էր:

Ինչպես Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը, այնպես էլ Հակոբ Մանանդյանը չեն ընդունում, որ Խոսրով Բ-ին սպանել է Անակ Պարթևը 340 թվականին, այլ ավելի հավանական են համարում, որ Խոսրով Բ-ն սպանված լինի, ինչպես վկայում է Եղիշեն, «ի հայրասպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց»[7]:

Այս տեսակետը յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանում: Այսպես, Կարապետ եպիսկոպոսը գրում է. «... մինչև որ 15—16 տարեկան դեռ տղայական հասակում Տրդատը ընտիրված էր տեղի տալ պարսից կորության առաջ, որոնց օգնում էին, ինչպես ենթադրել կարելի է Եղիշեի պատմության մի կարևոր ակնարկից՝ յուր «հայրասպան հօրեղբայրները»: Այդ դավաճան ազգականները հավանականորեն գաղտնի դավադրության մեջ լինելով պարսից թագավորի հետ՝ սպանել էին Խոսրովին, պարսից երկիրը փախել և շարունակ աշխատում էին վերադառնալ ու խլել թագավորությունը Տրդատից, որ և հաջողվեց 253-ին»[8]:

Հակոբ Մանանդյանը նշում է, որ «Եղիշեի այս վկայությունը, որ մեջ է բերված հայերի Թեոդոս կայսրին գրած նամակում, հավանորեն, ավելի մոտ է ճշմարտությանը, քան Ագաթանգեղոսի վիպական պատմվածքը: Ուստի և կարելի է ենթադրել, որ մանկիկ Տրդատի փախուստից հետո քաղաքական իշխանությունը Հայաստանում իրենց ձեռքն էին ձգել Խոսրով Բ-ի եղբայրները»[9]:

Չհերքելով վերը նշված կարծիքները՝ ցանկանում ենք որոշ լրացում կատարել: Նախ այն, որ եթե Խոսրովին սպանել են նրա եղբայրները կամ, ավելի ճիշտ, Հայաստանում հաստատված Պարթևները, որոնք այստեղ էին գաղթել Սասանյան հեղաշրջումից հետո, ապա դա դեռևս համոզիչ չէ ասելու համար, թե Անակ Պարթևը ոչ մի կապ չի ունեցել այդ սպանության հետ: Ճիշտ է, ավանդության մեջ շատ բան ճոխացված է, սակայն, մեր կարծիքով, այստեղ պահպանվել են պատմական հավաստի դեպքեր և դեմքեր: Մանավանդ որ մեկ չեն հասել այդ դավադրության կազմակերպիչների անունները, և հնարավոր է, որ սպանողներից մեկի անունը իրոք եղել է Անակ Պարթև, քանի որ Ագաթանգեղոսի մոտ նշված է, որ Անակը սպանությունը կատարել է ոչ միայնակ, այլ՝ եղբոր հետ միասին:

Հետագայում, ինչպես ճիշտ են նկատել Կարապետ եպիսկոպոսն ու Մանանդյանը, հայ նախարարները փորձել են գահի վրա հաստատել պատանի Տրդատին, սակայն այդ նրանց չի հաջողվել: 287 թվականից սկսած, մինչև Տրդատ Գ-ի գահակալությունը, Հայաստանում քաղաքական իշխանությունը գտնվել է Խոսրով Բ-ի եղբայրների կամ ազգականների ձեռքին, որոնք, հնարավոր է, վարել են պարսկամետ քաղաքականություն:

Այսպիսով, պարզ է, որ Ագաթանգեղոսի մոտ պահպանված ավանդության մեջ Անակ Պարթևի հետ կապված պատմությունը, հակառակ որոշ ճոխացման և վիպականացման, իրական հիմք ունի: Իսկ այն պատմությունը, թե Անակին Հայաստան է ուղարկել Սասանյան Արտաշիրը, ավելացվել է հետագայում, որպեսզի պատճառաբանվի Խոսրովի սպանությանը նրա մասնակցությունը: Նկատի պետք է ունենալ, որ Խոսրով Բ-ի (273—287) և Սասանյան Արտաշիրի (226—241) թագավորության տարիների միջև ընկած է երեսնամյա մի շրջան[10]:

Վերոհիշյալ փաստերի համադրումով կարելի է եզրակացնել, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը իրոք Պարթև Անակի որդին էր, որը գաղթել է Հայաստան Պարսկաստանում Սասանյան հեղաշրջումից հետո: Գաղթը տեղի

---

[5] Հ. *Մանանդյան*, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. Բ, մաս Ա, Երևան, 1978, էջ 108:

[6] Մանրամասն տես Հ. Մանանդյանի նշված աշխատությունը, էջ 106—110:

[7] *Եղիշե*, Պատմութիւն Վարդանանց, Թէոդոսիա, 1861, էջ 20:

[8] *Կարապետ ծ. վարդապետ*, նշվ. աշխ., էջ 62:

[9] Հ. *Մանանդյան*, նշվ. աշխ., էջ 108—109:

[10] Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 188, 191:

է ունեցել, ըստ Մանանդյանի, Շապուհ Ա թագավորի օրոք, 241 թվականից հետո[11]: Ուրեմն Ս. Գրիգոր Լուսավորիչը ծնվել է 241 թվականից հետո, քանի որ և՛ Ագաթանգեղոսը, և՛ Վարքերը նշում են, որ նա ծնվել է Հայաստանում: Ս. Գրիգոր Լուսավորիչը մահացել է Նիկիայի Տիեզերական ժողովից հետո «իբրեւ եկն Ռըստակէս որդի նորին ի ժողովոյն Նիկիոյ, այնուհետեւ ոչ ևս երևեցաւ յայտնեալ ումեք[12]», այսինքն՝ Արիստակեսի Նիկիայից վերադառնալը և Ս. Գրիգոր Լուսավորչի մահը հաջորդել են իրար: Հետեվաբար նա մահացել է 325/6 թվականներին, խոր ծերության հասակում[23]: Ուրեմն նա պետք է ծնված լինի 242/43 թվականին:

Հետագայում նա գնացել է Կեսարիա, որտեղ մկրտվել է քրիստոնյա և ստացել քրիստոնեական դաստիարակություն: Ս. Գրիգորը թեև ազգակցական կապեր ուներ Հայաստանում իշխանությունը կավթած նախարարների հետ, սակայն իր հունական դաստիարակության պատճառով չէր կարող կիսել նրանց քաղաքական հայացքները, այդ պատճառով էլ մնում է Կեսարիայում մինչև Տրդատ Գ-ի գահակալությունը: Թե ե՞րբ է նա գնացել Կեսարիա, հայտնի չէ, քանի որ աղբյուրները, հենվելով ավանդության վրա, ասում են, որ նա փախցվել է Հայաստանից մանուկ հասակում, այսինքն 244/5 թվականին: Այն, որ նա երկար է մնացել Կեսարիայում, ապացուցվում է նրանով, որ այստեղ Ս. Գրիգոր Լուսավորիչը ամուսնացել է Դավիթ անունով մի հավատացյալ մարդու դստեր՝ Մարիամի հետ և ունեցել երկու արու զավակ՝ Արիստակեսին և Վրթանեսին: Բացի այդ, նա այստեղ բարեկամական կապեր է հաստատել Փիրմելիանոս եպիսկոպոսի և Աթանագինես վկայի հետ[14]:

Ս. Գրիգոր Լուսավորչի Կեսարիայում ապրելը, այնտեղ կրթություն և քրիստոնեական դաստիարակություն ստանալը ոչ մի կասկած չի առաջացրել պատմաբանների մոտ: Սակայն ոմանք, հատկապես Ն. Մառը, այս փաստը ընդհանրացնելով՝ ձգտել են ապացուցել, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը Փոքր Հայքից եկած մի հույն քարոզիչ է եղել, որը ոչ մի կապ չի ունեցել հայկական նախարարական որևէ տան հետ: Ըստ Մառի, Լուսավորիչը չի քարոզել ամբողջ Հայաստանում, այլ եղել է տեղային քարոզիչ և քարոզել է ընդամենը հայկական մի գավառում: Հետագայում նրա անվան շուրջ ստեղծվել է ավանդություն, որը Գրիգորին դարձրել է Մեծ Հայքում քրիստոնեության քարոզիչ[14]:

Այն, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը հայ է եղել և ձեռնադրվել է Մեծ Հայքի եպիսկոպոսապետ, ապացուցվում է նրանով, որ ամբողջ հայ մատենագրության մեջ չկա որևէ ակնարկ, որ ցույց տա, թե նա անծանոթ է եղել հայ կյանքին և քարոզել է օտար լեզվով: Բացի այդ, միջնադարի պայմանները հաշվի առնելով, պետք է ենթադրել, թե այն ընդարձակ կալվածքները և դիրքը արքունիքում, որ ուներ նրա սերունդը և վայելում էր, անկախ հայրապետական կոչումից, չէին կարող միանգամից ձեռք բերված լինել, այլ Ս. Գրիգոր Լուսավորչի տոհմական սեփականությունն էին: Այս փաստի օգտին են խոսում մի շարք՝ արդեն պատմական, հավաստի հանգամանքներ, որոնք վերաբերում են եթե ոչ իրեն՝ Լուսավորչին, ապա գոնե նրա տոհմին Դ—Ե դարերի ընթացքում: Այդ տոհմը կալվածքներ ուներ Տարոնում, հատկապես Աշտիշատի շրջակայքում: Ուրեմն Գրիգոր Լուսավորիչը հայ ազնվական էր՝ կապված հայ երկրի հետ, քանի որ նա և նրա ժառանգները շարունակ Հայաստանում էին մնում, այստեղ էին մեծամեծ ջանքեր գործ դնում իրենց ազդեցությունն ու տիրապետությունը պահպանելու համար: Այսինքն նա այնքանով էր հայ, որքան մենք հայ կարող ենք համարել Տրդատին կամ Արշակունի մյուս թագավորներին: Բնականաբար այս բոլորը չէին խանգարում, որ Գրիգորը, դաստիարակված լինելով Կեսարիայի քրիստոնեական դպրոցում, տոգորված լիներ հունական ոգով:

Այլ փաստեր Ս. Գրիգոր Լուսավորչի Կեսարիայում եղած տարիների մասին մեզ չեն հասել: Հայտնի է միայն, որ Ս. Գրիգորի Հայաստան վերադառնալուց հետո, նրա կինը մտել է վանք իր կրտսեր որդու՝ Արիստակեսի հետ:

Թե ե՞րբ է Լուսավորիչը եկել Հայաստան, ճշգրիտ հայտնի չէ: Ըստ Ագաթանգեղոսի[15] և Խորենացու[16], նրա վերադարձը եղել է Տրդատ Գ-ի գահակալությունից, այսինքն 298 թվականից հետո:

Բնական է, որ հունական կրթություն ստացած Գրիգորը դեմ լիներ մինչև Տրդատ Մեծի գահակալությունը երկիրը կառավարող պարսկամետ կուսակցության վարած քա-

[11] Հ. *Մանանդյան*, նշվ. աշխ., էջ 94:

[12] *Մովսես Խորենացի*, Պատմություն Հայոց, Երևան, 1981, էջ 246:

[13] *Տաշյան*, Ագաթանգեղոս....., Տփղիս, 1909, էջ 46:

[14] *Н. Марр*, Крещение армян, грузин абхазов и аланов св. Григорием, Пет. 1905, ст. 154—155.

[15] *Ագաթանգեղոս*, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1882, էջ 34:

[16] *Խորենացի*, էջ 268:

ղաքականությանը և չկարողանար Հայաստան վերադառնալ: Այս պատճառով էլ նա վերադառնում է Հայաստան Տրդատի գահակալությունից հետո, ծառայում նրան ավանդվությամբ և բարեխղճությամբ, մինչև որ Տրդատին հայտնի է դառնում նրա ծագումը, որը, նրա քրիստոնյա լինելու հանգամանքի հետ միասին, պատճառ է դառնում Խորվիրապում նրա բանտարկվելուն:

Ս. Գրիգոր Լուսավորչի բանտարկվելու փաստը հետաքրքրական է այն իմաստով, որ առաջին հայացքից թվում է, թե նրա բանտ նետվելը Տրդատի հրամանով հակասում է մեր վերոհիշյալ ենթադրությանը, քանի որ նա հռոմեամետ կուսակցության, հետևաբար Տրդատ Մեծի կողմնակիցն էր:

Սակայն ամեն ինչ այդքան պարզ չէ, որքան թվում է առաջին հայացքից:

Նախ Տրդատ Գ-ն իր թագավորության ընկալբում, ձգտելով ինքնուրույն քաղաքականություն վարել, հենվում է հեթանոսության վրա, որը Հայաստանում չուներ ո՛չ պարսկական և ո՛չ էլ զուտ հունական բնույթ, այլ ուներ որոշ ազգայնական գծեր: Չենք ցանկանում մանրամասնել այս հարցը, քանի որ այն մանրամասն քննության են առել Լեոն և Հ. Մանանդյանը իրենց աշխատությունների համապատասխան գլուխներում[17]: Տվյալ պարագային Ս. Գրիգոր Լուսավորիչը, որքան էլ կողմնակից լիներ Տրդատ Գ-ի վարած արտաքին քաղաքականությանը, այնուամենայնիվ, որպես քրիստոնյա, պետք է հակասություններ ունենար նրա հետ ներքին քաղաքականությանը վերաբերող հարցերում, քանի որ, հենվելով հեթանոսության վրա, Տրդատը կարող էր հալածել քրիստոնյաներին, ինչ որ ցույց է տալիս պատմությունը: Այդ հալածանքների առաջին քայլը եղավ Ս. Գրիգորի չարչարանքներն ու բանտարկությունը: Այս ամենին միանում է նաև այն հանգամանքը, որ քրիստոնյա լինելու հետ միասին Ս. Գրիգոր Լուսավորիչը որդին էր իր հորն սպանողներից կամ սպանությունը կազմակերպողներից մեկի: Հենց այն, որ նա հակառակվում էր արքայի վարած ներքին քաղաքականությանը կամ չէր խրախուսում այն՝ լինելով զավակը պարսկամետ խմբի որևէ իշխանի, բավական էր, որ Տրդատը լուրջ մտավախություն ունենար և հրամայեր նրան նետել Խորվիրապ:

Քրիստոնյաների դեմ հալածանքներն ընկալվեցին Ս. Գրիգորի բանտարկությունից անմիջապես հետո: Այս հալածանքներնի զոհ գնացին նաև Ս. Հռիփսիմեն, Ս. Գայանեն և նրանց ընկերուհիները: Հավանաբար հալածանքները լայն թափ չեն ստացել և երկար չեն տևել, մանավանդ որ այստեղ միջամտել են արքայի քույր Խոսրովիդուխտը և նշանավոր նախարար Օտա Ամատունին:

Բացի այն, որ Տրդատը կանգնում է արքունիքից և իշխաններից ոմանց քրիստոնյա լինելու փաստի առաջ, հալածանքները պարզ են դարձնում, որ ժողովրդի մեջ նույնպես ամուր արմատներ էր նետել քրիստոնեությունը: Ահա այս դեպքերն ու քաղաքական բարենպաստ նախապայմանների առկայությունն են ստիպում Տրդատին Հայաստանում քրիստոնեությունն ընդունել իբրև պաշտոնական կրոն և քրիստոնեության հաստատումն ու տարածումը հանձնարարել Ս. Գրիգոր Լուսավորչին, որը նախարարական երևելի տոհմից էր, ուներ հիմնավոր քրիստոնեական դաստիարակություն:

ԳԱՐՈՒՇ ՍԱՐԿԱՎԱԳ ԼԱԶԱՐՅԱՆ

[17] *Լեո*, Հայոց Պատմություն, հտ. Ա, Երևան, 1966: *Հ. Մանանդյան*, նշվ. աշխատ.: